

ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱԹԱՆԱՏՈՄԻԱՆ ԿԱՄ ԽԱՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ՝ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԵԼՔՈՎ

Հիմնաբառեր. *տնտեսության մրցունակություն, մրցունակության հենասյուներ, արդյունավետության խթաններ, նորարարություն, հաղթանակի նախադրյալներ*

Տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումը ոչ միայն երկրի բնակչության բարեկեցության բարելավման միջոց է, այլև ազգային անվտանգության լրջագույն մարտահրավեր: Հողվածում կատարվել է Հայաստանի և Ադրբեջանի տնտեսական մրցակցության և դրա առանցքային բաղադրիչների շարժընթացի համեմատական վերլուծություն: Արձանագրված աղյուսներն ի վնաս մեզ են: Մրցունակությունը պայմանավորող գլխավոր ուղղություններով զիջել ենք տարիներ շարունակ: Սա նշանակում է, որ ոչ պարտությունը և ոչ էլ հաղթանակը վերացական հասկացություններ չեն, այլ որոշակի մատերիա՝ իրենց տրամաբանությամբ ու նախադրյալներով: Ապագայում հաղթանակներ գրանցելու համար պետք է հաշվի առնել այս իրողությունները և ժամ առաջ լծվել տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման գործին:

«Պատերազմում հաղթում կամ պարտվում են բանակները». այս ճևակերպումը պարունակում է մասնակի կամ կիսաճշմարտություն: Պատերազմի արդյունքը տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ դաշտերում փաստացի իրողությունների արտացոլումն է՝ իրողություններ, որոնք մինչ պատերազմը, միգուցե, բացահայտ կերպով տեսանելի չէին կամ էլ անտեսվում էին՝ ցանկալի պատկերը չխեղաթյուրելու, գորշ գույներ չհաղորդելու համար: Սակայն,



Արմեն ՔՈՒՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2000 թ. ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ ստանալով տնտեսագետ մագիստրիկոսի որակավորում, 2003 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ: 2007-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016-2017 թթ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում եղել է ծրագրի ղեկավար: 2017 թ. մինչ օրս զբաղեցնում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչի պաշտոնը: Հեղինակ է ավելի քան 30 գիտական և հետազոտական աշխատանքների:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Force Report No. 77, https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf; Bar-El, Ronen, Eyal Pecht & Asher Tishler. 2018. "Human Capital and National Security." Defence and Peace Economics 1-21:

մինչև այն է, պարտության դառնությունը ստիպում է ավելի լրջորեն և անաչառորեն փորձել անդրադառնալ անցյալի պատկերներին, իրողություններին ու հետահայաց հայտնաբերել այն «գորշ բծերը», որոնք ներկայիս աղետալի ձախողումների նախերգանքն են եղել:


Ստորև կատարել ենք երկրների տնտեսական մրցունակության և դրա առանձին բաղադրիչների շարժընթացի վերլուծություն՝ 2007-2018 թթ. ժամանակահատվածի համար: Տվյալների աղբյուրը Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության հաշվետվություններում ամփոփված գլոբալ մրցունակության համաթիվն է՝ ըստ համապատասխան ցուցանիշների համախմբի²: Համեմատական վերլուծությունը կատարվել է Հայաստանի և Ադրբեջանի նույնանման ցուցանիշների միջև: Դիտարկվել է նաև Իսրայելի օրինակը՝ որպես յուրօրինակ ուղեմիջ:

Հաղթանակը կարելի է համարել մրցունակության նյութականացում, մինչդեռ պարտությունը՝ դրա բացակայության դրսևորում³: Այս պարզ տրամաբանությունը գործում է նաև մերօրյա իրողությունների պարագայում: Հայաստանը գլոբալ մրցու-

նակության գնահատականով զիջում է Ադրբեջանին, և վերջին տարիներին դա անընդհատ բնույթ է կրում, ընդ որում, մրցունակության մակարդակներում ճեղքվածքը շարունակաբար մեծանում է՝ ի վնաս մեզ (գծապատկեր 1): Դրանով հանդերձ, Իսրայելի մրցունակության մակարդակն անհասանելի է ինչպես մեզ, այնպես էլ Ադրբեջանի համար:

Տնտեսությունների մրցունակությունն ընդունված է դիտարկել ըստ երեք խոշոր հարթությունների՝ հենքային պայմաններ, արդյունավետության խթաններ և նորարարություններ: Պետք է նշել, որ այս բոլոր երեք բաղադրիչներով զիջել ենք ու շարունակում ենք զիջել Ադրբեջանին (գծապատկեր 2, 3 և 4): Այսպես, ըստ հենքային պայմանների, 2007-2008 թթ.-ից առկա՝ ի վնաս մեզ տարբերության մեջ հետագա 10 տարվա ընթացքում որևէ կրճատում չի արձանագրվել: Ընդհակառակը՝ 2013-2014 թթ.-ից որոշակի ավելացում է գրանցվել (գծապատկեր 2):


2012-2016 թթ. Հայաստանին հաջողվել է նվազագույնի հասցնել արդյունավետության վրա հիմնված մրցունակության գործոնների առումով առկա տարբերությունը, սակայն հետագա տարիներին



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1


Գլոբալ մրցունակության համաթիվը 2007-2018 թթ.

² Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության համաթիվ ամփոփ տվյալների բազան, http://www3.weforum.org/docs/GCR2017-2018/GCI_Dataset_2007-2017.xlsx:
³ Ավելի մանրամասն այս իրողությունը դիտարկված է տարաբնույթ աշխատություններում: Տե՛ս, օրինակ՝ Nanto D. Economics and National Security: Issues and Implications for U.S. Policy. Congressional Research Service. January 4, 2011: <https://fas.org/sgp/crs/natsec/R41589.pdf>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Մրցունակության հենքային պայմանները 2007-2018 թթ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Արդյունավետության խթանները 2007-2018 թթ.

խզումը նոր թափով շարունակել է խորանալ (գծապատկեր 3):


Նմանօրինակ պատկեր է նաև նորարարությունների ոլորտում². համաձայն համապատասխան հենասյան գնահատականի՝ Հայաստանը դիտարկվող ժամանակահատվածում մշտապես զիջել է Ադրբեջանին, իսկ 2016 թ.-ից սկսած՝ այդ բացասական տարբերությունը միայն մեծացել է (գծապատկեր 4):

Դիտարկելով մանրամասները՝ համանման պատկերի ենք առերեսվում նաև մյուս ուղղություններում: Այսպես՝ 2007-ից

ի վեր Հայաստանն Ադրբեջանին մշտապես զիջել է ինստիտուտների զարգացման (գծապատկեր 5), ենթակառուցվածքների քանակի և որակի (գծապատկեր 6), մակրոտնտեսական միջավայրի ձևավորման (գծապատկեր 7) առումներով:


Հաճելի բացառությունների շարքից է մաթեմատիկական և բնագիտական կրթության որակի ցուցով Հայաստանի գերազանցությունը: Ընդ որում, հետազոտության համար ընտրված ժամանակահատվածում ոչ միայն մշտապես առաջ ենք եղել Ադրբեջանից, այլև կարողացել ենք ապա-

² Նորարարությունների և անվտանգության կապի մասին, տե՛ս, օրինակ՝ Manyika J., McRaven W. Innovation and National Security: Keeping Our Edge. Independent Task https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf




ԳԾԱՊԱՏՎԵՐ 4

Մրցունակության հենասյուն #12. Նորարարություններ, 2007-2018 թթ.




ԳԾԱՊԱՏՎԵՐ 5

Մրցունակության հենասյուն #1. Ինստիտուտներ, 2007-2018 թթ.




ԳԾԱՊԱՏՎԵՐ 6

Մրցունակության հենասյուն #2. Ենթակառուցվածքներ, 2007-2018 թթ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Մրցունակության հենասյուն #3. Մակրոտնտեսական միջավայր, 2007-2018 թթ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը


հովել նույնիսկ Իսրայելի հետ մրցակցելի մակարդակ (գծապատկեր 8):

Սրանով, սակայն, երջանիկ բացառությունների շարքը ցավոք սպառվում է: Արդեն, ըստ կրթության որակի ընդհանրական գնահատականի, 2016-2017 թթ.-ին Ադրբեջանը հավասարվել է մեզ, իսկ հաջորդ տարիներին՝ բարեհաջող կերպով առաջ անցել (գծապատկեր 9): Ինչ վերաբերում է տաղանդների օգտագործման արդյունավետության ցուցանիշին, ապա պատկերը հետևյալն է. 2007-2008 թթ.-ին Հայաստանն ու Ադրբեջանը գտնվել են գրեթե նույն մակարդակում, հետագա տարիներին Ադրբեջանը կայուն աճ է գրան-

ցել՝ հայտնվելով մեզ համար անհասանալի մակարդակում՝ հաջողությամբ մրցակցելով արդեն Իսրայելի հետ (գծապատկեր 10):


Տարակուսելի է, սակայն վերջին տարիներին Ադրբեջանին զիջում ենք նաև կառավարության արդյունավետության առումով, ինչը ոչ միայն այս ոլորտում մեր ոխերիմ հարևանի գրանցած առաջընթացի, այլև մեզանում արձանագրված անկման հետևանք է: Ընդ որում, այս ցուցանիշով 2017-2018 թթ.-ին զիջել ենք ավելի շատ, քան 2007-2008 թթ.-ին (գծապատկեր 11):

Մրցունակության մակարդակի կայուն և բարձր տեմպերով աճի կարևորագույն




ԳԾԱՊԱՏՎԵՐ 9

Կրթության որակը 2007-2018 թթ.




ԳԾԱՊԱՏՎԵՐ 10

Տաղանդների օգտագործման արդյունավետությունը 2007-2018 թթ.



ԳԾԱՊԱՏՎԵՐ 11

Կառավարության արդյունավետությունը 2007-2018 թթ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 12

ՕՈՒՆ-երի և տեխնոլոգիաների փոխանցումը 2007-2018 թթ.

Նախադրյալ են օտարերկրյա ներդրումները, նոր տեխնոլոգիաների փոխանցումը, տնտեսության տեխնոլոգիական հենքի թարմացումն ու ամրապնդումը: Այս ոլորտում նույնպես զիջել ենք Ադրբեջանին, ընդ որում, ոչ այնքան վերջինիս գրանցած թռիչքային աճի, որքան մեզանում արձանագրված (2013-2014 թթ.-ից ի վեր) կտրուկ անկման հետևանքով (գծապատկեր 12):

Այսպիսով՝ պետք է խոստովանել, որ գրեթե բոլոր ուղղություններով հետևողականորեն և կայուն կերպով ձախողել ենք բարեփոխումների իրագործման հնարավորությունները, կորցրել արժեքավոր մի ժամանակահատված, նահանջել տնտեսության մրցունակությունը պայմանավորող առանցքային դիրքերում, զիջել նախա-

ձեռնողականությունը: Փոխարենը՝ տուրք տալով ազգային սնապարծությանը, անտեսելով ներքին խնդիրներն ու արտաքին սպառնալիքները, շարունակել ենք ապավինել բացառապես աստվածային ողորմածությանն ու հրաշքին, որոնք, ըստ մեր մտածումների, չէին կարող շրջանցել մեզ՝ ընտրյալ ազգիս ներկա սերնդին: Հերթական անգամ, սակայն, այսօրինակ պատրանքները հօդս ցնդեցին՝ պահանջելով, որ, ի վերջո, գիտակցենք դաժան իրականությունը, լրջանանք, նորովի իմաստավորենք անկախ պետականության գաղափարը և ձեռնամուխ լինենք նոր, ավելի կայուն հիմքերի վրա գտնվող, համաշխարհային առումով մրցունակ տնտեսության կառուցմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն: Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, 2020, [https://www.sns.am/file_manager/razmavartutyun/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%A1%D5%B6%D5%BE%D5%B%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202020%20\(1\)_0.pdf](https://www.sns.am/file_manager/razmavartutyun/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%A1%D5%B6%D5%BE%D5%B%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202020%20(1)_0.pdf)
2. Bar-El, Ronen, Eyal Pecht & Asher Tishler. 2018. "Human Capital and National Security." Defence and Peace Economics 1-21.
3. van Apeldoorn, Bastiaan and Laura Horn. 2018. "Critical Political Economy." KFG Working Paper 87. As of 20 September 2019, https://www.polsoz.fu-berlin.de/en/v/transformeuropa/publications/working_paper/wp/wp87/WP_87_Apeldoorn_Horn_Web.pdf
4. Force Report No. 77, https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf

5. Nanto D. Economics and National Security: Issues and Implications for U.S. Policy. Congressional Research Service. January 4, 2011, <https://fas.org/sgp/crs/natsec/R41589.pdf>
6. Manyika J., McRaven W. Innovation and National Security: Keeping Our Edge. Independent Task, https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf
7. http://www3.weforum.org/docs/GCR2017-2018/GCI_Dataset_2007-2017.xlsx

Армен КТОЯН

Кандидат экономических наук, доцент, АГЭУ

ПАНОРАМА ВОЙНЫ

ПАТОЛОГИЯ ПОРАЖЕНИЯ ИЛИ ИГРА С ИСТОРИЕЙ С ПРЕДСКАЗУЕНЫМ ИСХОДОМ

Повышение конкурентоспособности экономики - это не только способ улучшить благосостояние населения страны, но и серьезный вызов национальной безопасности. В статье проводится сравнительный анализ динамики показателя конкурентоспособности и ее основных составляющих в Армении и Азербайджане. Зафиксированный результат действует нам во вред. В течение многих лет мы уступали по основным направлениям, определяющим конкурентоспособность. Это означает, что поражение или победа - это не абстрактное понятие, а конкретная материя со своей логикой и предпосылками. Чтобы в будущем одержать победы, мы должны учесть эти реалии и серьезно работать над повышением конкурентоспособности экономики страны.

Ключевые слова: *экономическая конкурентоспособность, столпы конкурентоспособности, стимулы к эффективности, инновации, предпосылки для победы*

Armen KTOYAN

PhD in Economics, Associate Professor, ASUE

WAR PANORAMA

PATHOLOGY OF DEFEAT OR PLAYING WITH HISTORY WITH A PREDICTABLE OUTCOME

Increasing the competitiveness of the economy is not only a way to improve the well-being of the country's population, but also a serious challenge to national security. The paper provides a comparative analysis of the dynamics of the competitiveness indicator and its main components in Armenia and Azerbaijan. The result is bad for us. For many years we have been inferior in the main areas that determine competitiveness. This means that a defeat or a victory are not abstract concepts, but concrete matters with their own logic and premises. In order to win victories in the future, we must take into account these realities and seriously work to increase the competitiveness of the country's economy.

Key words: *economic competitiveness, pillars of competitiveness, incentives for efficiency, innovation, prerequisites for victory*